ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հայոց պատմություն

Նախագծի անվանումը՝ Հայաստանը մայրաքաղաքների երկիր է...

Դասարան՝ 7

Նախագծի իրականացման փուլերը՝ 6 փուլ

Նախագծի ղեկավար՝ Ի. Վարդանյան

Նախագծի անդամները՝

1. Կալաջյան Հովսեփ
2. Թեյմուրյան Չինար
3. Ստեփանյան Շուշան
4. Համբարձումյան Ալեքս
5. Թեյմուրյան Ալեքս
6. Սևոյան Նելլի
7. Գևորգյան Նարե

Ուսումնական տարի՝ 2023-2024թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Նախաբան
- Տիգրանակերտի կառուցումը հայկական աղբյուրներում
- Տիգրանակերտի նկարագրումը օտար պատմագիրների կողմից:
- Եզրակացություն
- Գրականության ցանկ



Նախագծային աշխատանք

Հայաստանը մայրաքաղաքների երկիր է: Աշխարհի ոչ մի երկիր իր պատմության ընթացքում այնքան մայրաքաղաքներ չի ունեցել, որքան Հայաստանը: Հայաստանի մայրաքաղաքները՝ 12: Դրանք են՝ Արմավիրը, Վանը, Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Դվինը, Բագարանը, Շիրակավանը, Կարսը, Անին, Երևանը: Այս մայրաքաղաքների մեծ մասը գտնվել է Մեծ Հայքի սիրտը համարվող Այրարատ նահանգում: Հայաստանը մշտապես շրջապատված է եղել այնպիսի երկրներով ու ժողովուրդներով, որոնք ցանկացել են տիրանալ մեր հայրենիքին: Այդ երկրների թշնամական հարձակումներին դիմագրավելու և իր սուրբ հողը պաշտպանելու համար հայ ժողովուրդը, բացի նրանից, որ կենսամահու պայքար է մղել, նաև կառուցել է բազմաթիվ անառիկ բերդեր և ամրոցներ, քաղաքներ: Բոլոր այդ քաղաքները հայոց պատմության անպաժան մասն են, պետականության խորհրդանիշներիը: Պատահական չէ, որ մեր նորօրյա քաղաքապետարանի շենքի ճարտարապետության գլխավոր տարրերից են բոլոր մայրաքաղաքների հուշասյունները: Մայրաքաղաքի դերում Երևանին:

Հայոց բոլոր մայրաքաղաքներն էլ ունեցել են բազմաթիվ գեղեցիկ շինություններ՝ միջնաբերդ, արքունական պալատներ, եկեղեցիներ, ամրոցներև այլն, որոնք իրենց ուրույն ճարտարապետությամբ և գեղեցկությամբ մշտապես հիացմունք են պատճառել ականատեսներին:

Հելլենիստական դարաշրջանի սկզբին, մ.թ.ա. III դարում սկսված քաղաքաշինությունը Արտաշեսյան հարստության ժամանակ նոր թափով շարունակվեցին: Տիգրանակերտ մայրաքաղաքի մասին

վկայում են հունա-հռոմեական աղբյուրները և Մովսես Խորենացին: Տիգրան երկրորդի օրոք Հայաստանը դուրս եկավ միջազգային լայն ասպարեզ և մ.թ.ա. I դ. առաջին քառորդին արդեն Առաջային Ասիայի քաղաքական հզոր ուժերից մեկն էր: Տիգրան II, հետևելով հելլենիստական ավանդույթներին, Աղձնիքում կառուցեց նորաստեղծ կայսրության մայրաքաղաք Տիգրանակերտը (մ.թ.ա. 80-ական թթ) ինչպես նաև Տիգրանակերտ անունով քաղաքներ Արցախում, Ուտիքում և այլն: Մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը շատ աղբյուրներ ցույց են տալիս Տիգրիսի վերին հոսանքի շրջանում, մի մասը նշում է Տիգրիսից հյուսիս, մյուսը՝ հարավ:

Տիգրանակերտ մայրաքաղաքի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում հունա-հռոմեական աղբյուրները՝ կապված Լուկոզլոսի կողմից Տիգրանակերտ շրջապատման և գրավման հետ:

Քաղաքաշինության կարևորագույն օղակներից են պաշտպանական կառույցները, որոնք արտահայտում են տվյալ շրջանի ճարտարապետության ռազմարվեստի նվաճումները և պետության տնտեսական ու քաղաքական վիճակը:

Ապպիանոսը վկայում է, որ Տիգրանակերտն ուներ 50 կանգուն (25-26մ) բարձրությամբ պարիսպներ, որոնք այնքան լայն են եղել,որ դրանց մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ և պահեստներ: Այսինքն, Տիգրանակերտի ռազմավարական դիրքը շատ հարմար է եղել, ունեցել է պաշտպանական հզոր համակարգ, ամուր միջնաբերդ, որի շնորհիվ քաղաքը կարողացավ դիմանալ Լուկոլլոսի երկարատև պաշարմանը և միայն հինգ ամիս հետո, հույների դավաճանության պատճառով, հռոմեացիներին հաջողվեց մ.թ.ա. 69թ. գրավել, կողոպտել ու քարուքանդ անել: Տիգրան Մեծը քաղաքի արվարձանում կառուցել էր պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով,

որսատեղերով և լճերով: Մերձակայքում հիմնել էր նաև մի հզոր բերդ:

Հելլենիստական երկրներում նորաստեղծ քաղաքները բնակեցվում էր համաբնակեցման միջոցով: Բնակչության թվի վերաբերյալ չկան ուղղակի վկայություններ: Անուղղակի մի շարք փաստերի հիման վրա, ենթադրվում է, որ քաղաքն իր ծաղկման շրջանում ունեցել է ավելի քան 100 հազար բնակիչ: Ազգային տեսակետից Տիգրանակերտի բնակչությունը միատարր չէր: Բնակչության մեծ մասն հայեր էին: Այստեղ բնակվում էին նաև մեծ թվով հրեաներ, հույներ, ասորներ և այլոք: Բնակչության մեծագույն մասը զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով: Երկվոր բնակչության մեծ մասը պատկանում էր գերիների թվին, որոնց Տիգրան II բերել էր իր արշավանքից հետո:

Քաղաքը ունեցել է իր թատրոնը, որտեղ հույն դերասանները ողբերգություններ և կատակերգություններ են բեմադրել:

Տիգրանակերտը Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքն էր և շատ է հիշատակում օտար և հայկական ախբյուրներում: Հիշատակությունների համաձայն Տիգրանակերտը եղել է ծաղկուն, բազմամարդ, մեծ քաղաք:

Գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի քաղաքական և տնտեսական, մշակույթային կյանքին:

Ունեցել է դիմահարդարան:

Նշենք, որ առ այսօր Տիգրանակերտի տեղադրության հարցում հստակության չկա:

Պատմիչ Պլուտարքոսի խոսքերով Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անջինք և մեծատոհմիկները, ցանկացավ հաճոյանալ թագավորին, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար:

Տիգրան Մեծից հետո երկրի քաղաքական կենտրոններն էին դառնում բացառապես այն քաղաքները, որոնք գտնվում էին Այրարատյան աշխարհում: Տիգրանակերտը տնտեսապես տուժում է Հռոմի և Պարսկաստանի միջև ընթացող պատերազմների արդյունքում: Այն աստիճանաբար վերածվում է բերդաքաղաքի:

II-III դարերից սկսած Տիգրանակերտը մյուս հելլենիստական քաղաքների օրինակով դառնում է ֆեոդալական քաղաք: Սակայն Տիգրանակերտը չի կորցնում իր կարևորությունը և շարունակում է լինել վարչական կենտրոն թե՛ հայերի, թե՛ հռոմեացիների համար:

XII դարից սկսած աստիճանաբար կորցնելով իր նշանակությունը, այն վերածվում է անշուք բնակավայրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշել ենք Տիգրան Մեծի գործունեությունը նշանավորվել է աշխույժ քաղաքաշինությամբ: Տիգրանի նվաճումների հետևանքով նոր մայրաքաղաքի կառուցումը դարձել է օրակարգի հարց:

Տիգրան Մեծի կյանքի ու գործի հիանալի նկարագրությունը փոխանցվել է սերնդից սերունդ, գովերգվել են նրա մարդկային ու արքայական առաքինությունները: Անգամ հռոմեացի պատմիչներն էին ստիպված խոստովանում, որ հանձին Տիգրանի՝ Հռոմը գործ է ունեցել «վսեմ քաջությամբ օժտված հակառակորդի հետ»:

Հայոց արքան իր նախորդներից ժառանգել էր ներքին և արտաքին ցնցումները հաղթահարած և բավականին կայուն թագավորություն: Նա կարողացավ ոչ միայն ապահովել իր տերության քաղաքականության՝ հզոր բանակի միջոցով ապահովելով Հայաստանի հավասարակշիռ դիրքը տարածաշրջանում:

Այսօր ևս արտաքին հարաբերություններում կարևոր է բազմակողմանի համագործակցությունը առևտրի, դիվանագիտության ռազմական և այլ ուղղություններով:

Այդպես հնարավոր է հօգուտ պետության կարգավորել խաղաղության և պատերազմի հարցերը, քանզի խաղաղությունը բերում է առաջընթաց, բարգավաճում, շենացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայոց պատմություն» Ուսումնական ձեռնարկ
2. «Հայոց պատմություն» Ռ. Սիմոնյան
3. Վիքիպեդիա «Ազատ հանրագիտարան»
4. publishing@ysu.am